

Կ-076-27.10.2021,07.02.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 1-ին հոդվածի 1-ին մասում «իրականացման կարգը,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա հարկային մարմնի կողմից օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություն ստանալու վերաբերյալ դիմումների քննության կարգը,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Վարչական դատարան կարող է դիմել նաեւ հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա բանկերում եւ այլ ֆինանսական կազմակերպություններում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություն (այսուհետ՝ գաղտնի տեղեկություն) հարկման նպատակով ստանալու վերաբերյալ գործերով՝ սույն օրենսգրքի 31.7-րդ գլխին համապատասխան:»:

Հոդված 3. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) սույն օրենսգրքի 31.7-րդ գլխով սահմանված հարկային մարմինների կողմից տեղեկատվության փոխանակման վերաբերյալ գործերով վարույթի շրջանակներում առաջացել է անհրաժեշտություն պարզել լրացուցիչ հանգամանքներ կամ ստանալ տեղեկություններ:»:

Հոդված 4. Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.7-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 31.7

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 222.20. Հարկային մարմինների կողմից տեղեկատվության փոխանակման վերաբերյալ գործերը

1. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա հարկման նպատակով գաղտնի տեղեկություն ստանալու համար հարկային մարմնի դիմումի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

Հոդված 222.21. Դիմումին ներկայացվող պահանջները եւ կցվող փաստաթղթերը

1. Սույն օրենսգրքի 222.20-րդ հոդվածում նշված գործերով դիմումը ձեւակերպվում է գրավոր եւ բովանդակում է.

1) նշում այն մասին, որ դիմումը ներկայացվում է վարչական դատարան,

2) Դիմողի անվանումը եւ հասցեն,

3) Դիմումը ներկայացնող պաշտոնատար անձի անունը, պաշտոնը,

4) Դիմումի էության հակիրճ նկարագրությունը,

5) Այն փաստերը, որոնց վրա հիմնվում է դիմողի պահանջը՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում տեղեկատվություն տրամադրելու սահմանված պահանջը եւ հիմնավորում առ այն, որ օտարերկրյա իրավասու մարմնի կողմից հայցվող տեղեկատվությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում սահմանված պահանջներին եւ առկա չեն դրանցով սահմանված տեղեկություն տրամադրելու մասին հարցման մերժման հիմքերը,

6) դիմողի պահանջը հիմնավորող փաստարկները,

7) դիմողի պահանջը,

8) գրավոր ապացույցների ցանկը, եթե այդպիսիք կցվում են դիմումին,

9) հարցման մեջ նշված անձին կամ անձանց նույնականացնող տվյալները եւ այն փաստերն ու հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել անձանց վերաբերյալ հարցում անելու համար,

10) Դիմումը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

2. Դիմումը ստորագրում է դիմողի պաշտոնատար անձը:

3. Դիմումին կից ներկայացվում է օտարերկրյա իրավասու մարմնի հարցման վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

Հոդված 222.22. Դիմումի քննությունը

1. Վարչական դատարանը պարտավոր է դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ընդունել վարույթ, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքի 222.21-րդ հոդվածով նախատեսված պահանջների պահպանմամբ:

2. Եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 222.21-րդ հոդվածի պահանջները, ապա վարչական դատարանը եռօրյա ժամկետում պատճառաբանված որոշմամբ դիմումը վերադարձնում է՝ նշելով այն պահանջը, որը չի պահպանվել: Դիմումում առկա ձեռնարկային սխալները վերացնելու եւ որոշումը ստանալու օրվանից հետո՝ երկու օրվա ընթացքում, այն վարչական դատարան կրկին ներկայացնելու դեպքում դիմումը վարչական դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

3. Սույն գլխով նախատեսված գործերը վարչական դատարանը քննում է միանձնյա՝ գրավոր ընթացակարգով՝ դռնփակ դատական նիստում:

4. Սույն գլխով նախատեսված գործերով դիմումը վարչական դատարանը քննում եւ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 15 օրյա ժամկետում:

5. Վարչական դատարանը իրավասու է ոչ ավել, քան եռօրյա ժամկետով կասեցնել գործի վարույթը, եթե անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ հանգամանքներ պարզել կամ տեղեկություններ

ստանալ: Սույն մասով սահմանված կասեցումը ենթակա չէ բողոքարկման: Վարչական դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը վերսկսելու մասին, եթե վերացել են կասեցումն առաջացրած հանգամանքները՝ այդ մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնելով դիմողին:

Հոդված 222.23. Դատական ակտերը

1. Սույն գլխով նախատեսված գործերով վարչական դատարանը կայացնում է հետեւյալ դատական ակտերից մեկը.

1) Հարկային մարմնի պահանջը օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից ստացված հարցման հիման վրա գաղտնի տեղեկությունների տրամադրումը բավարարելու մասին, եթե առկա չէ այն մերժելու վերաբերյալ սույն մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը:

2) Հարկային մարմնի պահանջը օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից ստացված հարցման հիման վրա գաղտնի տեղեկությունների տրամադրումը լրիվ կամ մասնակի մերժելու մասին, եթե

ա. օտարերկրյա իրավասու մարմնի պահանջը չի բավարարում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում սահմանված պահանջներին.

բ. հայցվող գաղտնի տեղեկության տրամադրումը կհանգեցնի առեւտրային այնպիսի գաղտնիքի բացահայտման, որը տնտեսական արժեք ներկայացնելու ուժով կարող է շահագործվել եւ որի չթույլատրված օգտագործումը կարող է հարկատուին պատճառել էական վնասներ.

գ. հայցվող գաղտնի տեղեկության տրամադրումը կհանգեցնի այնպիսի փաստաբանական գաղտնիքի, ծառայողական տեղեկատվության կամ ծառայողական գաղտնիքի տրամադրման, որը իրենից ներկայացնում է գաղտնի հաղորդակցություն փաստաբանի կամ իրավաբանական ծառայություններ մատուցող անձի եւ հաճախորդի միջեւ եւ որը իրականացվել է իրավաբանական խորհրդատվություն կամ ներկայացուցչություն հայցելու, տրամադրելու կամ ապահովելու նպատակով,

դ. հայցվող գաղտնի տեղեկության տրամադրումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության համար, ներառյալ հանգեցնել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով սահմանված պետական կամ ծառայողական գաղտնիքի տրամադրման,

2. Սույն գլխով նախատեսված գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտը բովանդակում է սույն օրենսգրքով դատական ակտի բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ հայցվող տեղեկատվության տրամադրման ձեւը եւ ժամկետները:

3. Վարչական դատարանի դատական ակտը հրապարակվում է դռնփակ նիստում եւ օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 5 օր հետո:

4. Վարչական դատարանը դատական ակտը ուղարկում է հարկային մարմնին եւ այդ մասին ծանուցում է այն անձին կամ անձանց, ում վերաբերյալ կայացվել է դատական ակտը, բացառությամբ այն դեպքի, երբ հարկային մարմինը դիմումում նշել է անձին կամ անձանց չծանուցելու անհրաժեշտության վերաբերյալ՝ հայտնելով, որ դա կարող է խոչընդոտել օտարերկրյա իրավասու մարմնի կողմից իր գործառույթների հաջող իրականացմանը եւ երաշխավորելով, որ.

1) հարկային մարմինը օտարերկրյա իրավասու մարմինն ներկայացնելու է պահանջ՝ ծանուցումը բացառող հանգամանքները վերանալուց հետո ողջամիտ ժամկետում դատական ակտը անձին կամ անձանց հասանելի դարձնելու վերաբերյալ,

2) դատական ակտը կայացնելու օրվանից երկու տարին լրանալուց հետո տասնօրյա ժամկետում հարկային մարմինը դատական ակտը ուղարկելու է այն անձին կամ անձանց, ում վերաբերյալ կայացվել է դատական ակտը:

5. Այն անձը, ում վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին կայացվել է որոշում, կարող է բողոքարկել այդ դատական ակտը սույն օրենսգրքի 22-րդ գլխով սահմանված կարգով:

6. Վերաքննիչ դատարանը բողոքն ընդունում է վարույթ եւ գործը քննում է 10-օրյա ժամկետում: Վերաքննիչ դատարանը գործը քննում է միանձնյա՝ գրավոր ընթացակարգով: Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին կայացված որոշումը վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման: Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակվում է դռնփակ նիստում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Նախագիծ
Երկրորդ ընթերցում*

Կ-076-27.10.2021,07.02.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասում «իրականացման կարգը,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա հարկային մարմնի կողմից օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություն ստանալու վերաբերյալ դիմումների քննության կարգը,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Վարչական դատարան կարող է դիմել նաեւ հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա բանկերում եւ այլ ֆինանսական կազմակերպություններում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություն (այսուհետ՝ գաղտնի տեղեկություն) հարկման նպատակով ստանալու վերաբերյալ գործերով՝ սույն օրենսգրքի 31.7-րդ գլխին համապատասխան:»:

Հոդված 3. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) սույն օրենսգրքի 31.7-րդ գլխով սահմանված հարկային մարմինների կողմից տեղեկատվության փոխանակման վերաբերյալ գործերով վարույթի շրջանակներում առաջացել է անհրաժեշտություն պարզել լրացուցիչ հանգամանքներ կամ ստանալ տեղեկություններ:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնելի հետեւյալ բովանդակությամբ 31.7-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 31.7

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 222.20. Հարկային մարմինների կողմից տեղեկատվության փոխանակման վերաբերյալ գործերը

1. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա հարկման նպատակով գաղտնի տեղեկություն ստանալու համար հարկային մարմնի դիմումի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

Հոդված 222.21. Դիմումին ներկայացվող պահանջները եւ կցվող փաստաթղթերը

1. Սույն օրենսգրքի 222.20-րդ հոդվածում նշված գործերով դիմումը ձեւակերպվում է գրավոր եւ բովանդակում է.

- 1) նշում այն մասին, որ դիմումը ներկայացվում է վարչական դատարան,
- 2) Դիմողի անվանումը եւ հասցեն,
- 3) Դիմումը ներկայացնող պաշտոնատար անձի անունը, պաշտոնը,
- 4) Դիմումի էության հակիրճ նկարագրությունը,

5) Այն փաստերը, որոնց վրա հիմնվում է դիմողի պահանջը՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում տեղեկատվություն տրամադրելու սահմանված պահանջը եւ հիմնավորում առ այն, որ օտարերկրյա իրավասու մարմնի կողմից հայցվող տեղեկատվությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում սահմանված պահանջներին եւ առկա չեն դրանցով սահմանված տեղեկություն տրամադրելու մասին հարցման մերժման հիմքերը,

6) դիմողի պահանջը հիմնավորող փաստարկները,

7) դիմողի պահանջը,

8) գրավոր ապացույցների ցանկը, եթե այդպիսիք կցվում են դիմումին,

9) հարցման մեջ նշված անձին կամ անձանց նույնականացնող տվյալները, ~~կամ խմբային հարցման դեպքում՝ խմբի մանրամասն նկարագրությունը՝ խմբի մեջ մտնող անձանց նույնականացնող տվյալները~~ եւ այն փաստերն ու հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել ~~խմբային~~ անձանց վերաբերյալ հարցում անելու համար,

10) Դիմումը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

2. Դիմումը ստորագրում է դիմողի պաշտոնատար անձը:

32. Դիմումին կից ներկայացվում է օտարերկրյա իրավասու մարմնի հարցման վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

Հոդված 222.22. Դիմումի քննությունը

1. Վարչական դատարանը պարտավոր է դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ընդունել վարույթ, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքի 222.21-րդ հոդվածով նախատեսված պահանջների պահպանմամբ:

2. Եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 222.21-րդ հոդվածի պահանջները, ապա վարչական դատարանը եռօրյա ժամկետում պատճառաբանված որոշմամբ դիմումը վերադարձնում է՝ նշելով այն պահանջը, որը չի պահպանվել: Դիմումում առկա ձեռագրված սխալները վերացնելու եւ որոշումը ստանալու օրվանից հետո՝ երկու օրվա ընթացքում, այն վարչական դատարան կրկին ներկայացնելու դեպքում դիմումը վարչական դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

3. Սույն գլխով նախատեսված գործերը վարչական դատարանը քննում է միանձնյա՝ գրավոր ընթացակարգով՝ դռնփակ դատական նիստում:

4. Սույն գլխով նախատեսված գործերով դիմումը վարչական դատարանը քննում եւ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 15 օրյա ժամկետում:

5. Վարչական դատարանը իրավասու է ոչ ավել, քան եռօրյա ժամկետով կասեցնել գործի վարույթը, եթե անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ հանգամանքներ պարզել կամ տեղեկություններ ստանալ: Սույն մասով սահմանված կասեցումը ենթակա չէ բողոքարկման: Վարչական դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը վերսկսելու մասին, եթե վերացել են կասեցումն առաջացրած հանգամանքները՝ այդ մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնելով դիմողին:

Հոդված 222.23. Դատական ակտերը

1. Սույն գլխով նախատեսված գործերով վարչական դատարանը կայացնում է հետեւյալ դատական ակտերից մեկը.

1) Հարկային մարմնի պահանջը օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից ստացված հարցման հիման վրա գաղտնի տեղեկությունների տրամադրումը բավարարելու մասին, եթե առկա չէ այն մերժելու վերաբերյալ սույն մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը:

2) Հարկային մարմնի պահանջը օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից ստացված հարցման հիման վրա գաղտնի տեղեկությունների տրամադրումը լրիվ կամ մասնակի մերժելու մասին, եթե

ա. օտարերկրյա իրավասու մարմնի պահանջը չի բավարարում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում սահմանված պահանջներին.

բ. հայցվող գաղտնի տեղեկության տրամադրումը կհանգեցնի առետրային այնպիսի գաղտնիքի բացահայտման, որը տնտեսական արժեք ներկայացնելու ուժով կարող է շահագործվել եւ որի չթույլատրված օգտագործումը կարող է հարկատուին պատճառել էական վնասներ.

գ. հայցվող գաղտնի տեղեկության տրամադրումը կհանգեցնի այնպիսի փաստաբանական գաղտնիքի, ծառայողական տեղեկատվության կամ ծառայողական գաղտնիքի տրամադրման, որը

իրենից ներկայացնում է գաղտնի հաղորդակցություն փաստաբանի կամ իրավաբանական ծառայություններ մատուցող անձի եւ հաճախորդի միջեւ եւ որը իրականացվել է իրավաբանական խորհրդատվություն կամ ներկայացուցչություն հայցելու, տրամադրելու կամ ապահովելու նպատակով,

դ. հայցվող գաղտնի տեղեկության տրամադրումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության համար, ներառյալ հանգեցնել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով սահմանված պետական կամ ծառայողական գաղտնիքի տրամադրման,

2. Սույն գլխով նախատեսված գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտը բովանդակում է սույն օրենսգրքով դատական ակտի բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ հայցվող տեղեկատվության տրամադրման ձեւը եւ ժամկետները:

3. Վարչական դատարանի դատական ակտը հրապարակվում է դռնփակ նիստում եւ օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 5 օր հետո:

4. Վարչական դատարանը դատական ակտը ուղարկում է հարկային մարմինն եւ այդ մասին ծանուցում է այն անձին կամ ~~խմբին~~անձանց, ում վերաբերյալ կայացվել է դատական ակտը, բացառությամբ այն դեպքի, երբ հարկային մարմինը դիմումում նշել է անձին կամ ~~խմբին~~անձանց չծանուցելու անհրաժեշտության վերաբերյալ՝ հայտնելով, որ դա կարող է խոչընդոտել օտարերկրյա իրավասու մարմնի կողմից իր գործառույթների հաջող իրականացմանը եւ երաշխավորելով, որ.

1) հարկային մարմինը օտարերկրյա իրավասու մարմինն ներկայացնելու է պահանջ՝ ծանուցումը բացառող հանգամանքները վերանալուց հետո ողջամիտ ժամկետում դատական ակտը անձին կամ ~~խմբին~~անձանց հասանելի դարձնելու վերաբերյալ,

2) դատական ակտը կայացնելու օրվանից ~~երեք~~երկու տարին լրանալուց հետո տասնօրյա ժամկետում հարկային մարմինը դատական ակտը ուղարկելու է այն անձին կամ ~~խմբին~~անձանց, ում վերաբերյալ կայացվել է դատական ակտը:

5. Այն անձը, ում վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին կայացվել է որոշում, կարող է բողոքարկել այդ դատական ակտը սույն օրենսգրքի 22-րդ գլխով սահմանված կարգով:

6. Վերաքննիչ դատարանը բողոքն ընդունում է վարույթ եւ գործը քննում է 10-օրյա ժամկետում: Վերաքննիչ դատարանը գործը քննում է միանձնյա՝ գրավոր ընթացակարգով: Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին կայացված որոշումը վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման: Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակվում է դռնփակ նիստում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-076-27.10.2021,07.02.2022-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 443.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է, որ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հանգամանքը պարզելու նպատակով հարկային մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է հարցումներ ուղարկել լիազոր մարմիններին, որոնք պարտավոր են նշված հարցմանը պատասխանել անհապաղ: Հաշվի առնելով իրավական որոշակիությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք «անհապաղ» բառը փոխարինել «հարկային մարմնի սահմանած կարգով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություն ստանալու վերաբերյալ հարցումները կարող են վերաբերել անձին կամ անձանց խմբին: Հաշվի առնելով, որ նշված նախագծերով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			<p>սահմանված չէ խմբի հասկացությունը, ուստի առաջարկում ենք «խմբին» բառը փոխարինել «անձանց» բառով:</p> <p>Ելնելով վերոգրյալից՝ միաժամանակ, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող օրենսգրքի 222.21-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9) հարցման մեջ նշված անձին կամ անձանց նույնականացնող տվյալները և այն փաստերն ու հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել անձանց վերաբերյալ հարցում անելու համար,»:</p>		
3.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	<p>«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 443.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 222.23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսվել է, որ դատական ակտը կայացնելու օրվանից երեք տարին լրանալուց հետո տասնօրյա ժամկետում այն ուղարկվում է այն անձին կամ անձանց, ում վերաբերյալ կայացվել է տվյալ դատական ակտը:</p> <p>Հաշվի առնելով նախատեսված ժամկետի երկարատև լինելու հանգամանքը՝ առաջարկում ենք «երեք» բառը փոխարինել «երկու» բառով:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության	Առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 222.20-րդ, 222-21-րդ,	Ընդունվել է:	Ընդունվել է:

		վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	222-22-րդ և 222-23-րդ հոդվածների համարակալումները տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, որի համաձայն՝ հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով:		
5.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 222.21-րդ հոդվածի 1-ին մասում «Դիմումը ստորագրում է դիմողի պաշտոնատար անձը:» նախադասությունը շարադրել մասի տեսքով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Անհրաժեշտ է վերանայել նաև դրան հաջորդող մասի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծով լրացվող 443.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «2-րդ» բառը առաջարկում ենք փոխարինել «1-ին» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է: